ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 փետրվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

22
(2688)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻՊ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՐՑԸ՝ ԳԼԽԱՑԱՎԱՆՔ

Քրիստինե Գրիգորյանի հրաժարականից հետո ՄԻՊ պաշտոնը դարձել է իսկական պատուհաս գործող իշխանության գլխին: Անհասկանալի պատճառներով որեւէ մեկը չի ցանկանում ստանձնել այս բարձր հեղինակություն ունեցող կառույցի ղեկավարումը:

Քրիստինե Գրիգորյանը այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ հունվարի 23-ին հրաժարականի դիմում էր ներկայացրել Ազգային ժողով, Հայաստանի Ազգային ժողովը հունվարի 24-ին ընդունել էր նրա հրաժարականը: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, նոր ՄԻՊ պետք է ընտրվի: Արդեն լրանում է ՄԻՊ առաջադրման երկրորդ ժամկետը, բայց ո՛չ իշխանությունը, ո՛չ էլ ընդդիմությունը թեկնածու դեռ չի առաջադրել: «ԱԺ կանոնակարգ» օրենքը սահմանում է նաեւ, որ եթե սահմանված ժամկետում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին թեկնածու չի առաջադրվում, ապա դրանից հետո՝ էլի տասնօրյա ժամկետում, պետք է առաջադրում լինի. դարձյալ տասնօրյա ժամկետ է սահմանվում, եւ այսպես մինչեւ 3-րդ ամսվա վերջին օրը պետք է արդեն օմբուդսմենը նշանակված լինի: Իշխող ֆրակցիայի համար ՄԻՊ թեկնածուի հարցը իսկական գլխացավանք է դարձել: «Ժողովուրդ» օրաթերթը գրել է, որ իշխող ՔՊ խմբակցությունն այս ընթացքում ՄԻՊ թեկնածուի տարբեր անուններ է քննարկել, սակայն այդպես էլ չի գտել թեկնածու, որը կհամապատասխանի պահանջներին՝ կլինի պրոֆեսիոնալ եւ, ամենակարեւորը, հանրության կողմից վստահություն վայելող կերպար: ՔՊ-ականները պարբերաբար նեղսրտում են, որ ում իրենք առաջարկում են, բոլորը հրաժարվում են առաջադրվել ՄԻՊ պաշտոնում: Մեր ունեցած տեղեկություններով՝ պատճառներից մեկն այն է, որ Փաշինյանը պահանջ է դրել գտնել հեշտ «կառավարելի» մեկին, որը կդառնա բացառապես «ՔՊ-ի իրավունքների պաշտպանը», դուրս չի գա վերահսկողությունից եւ չի համարձակվի ձայն հանել, երբ, օրինակ, ընդդիմադիր հայացքներ ունեցող որեւէ մեկի իրավունքները ոտնահարվեն: ՔՊ-ի սրտի ՄԻՊ թեկնածուն Արտակ Զեյնալյանն էր, որը, ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, չի ցանկացել առաջադրվել ՔՊ-ի կողմից: Նա մտերիմ շրջապատում դժգոհել է, որ չի ցանկանում առաջադրվել, քանի որ մեկ անգամ արդեն ՔՊ-ականներն իրեն խաբել են. առաջադրել են ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորի պաշտոնում, սակայն այդպես էլ չեն ընտրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ընդդիմությունը թեկնածուներ ունեցել է, սակայն որոշել է թեկնածու չառաջադրել՝ վստահ լինելով, որ Փաշինյանը ՔՊ-ին թույլ չի տա ընդդիմության թեկնածուին ընտրել: Ստացվում է՝ ՄԻՊ պաշտոնում թեկնածու ընտրելու արդեն երկրորդ տասնօրյակն է լրանում, սակայն թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր թեւը դեռ թեկնածու չունեն:

ՔՊ-ական պատգամավորները երեկ Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ դռնփակ քննարկում են անցկացրել: «Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ-ի եւ Ախ քարտուղարի փակ քննարկումից: Տեղեկացանք, որ քննարկումը տեւել է մոտ 4 ժամ. սկզբում քննարկվել է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, համաձայն որի՝ ռազմական դրության ժամանակ նախատեսվում են հեռուստատեսությամբ, ինտերնետով եւ սոցիալական կայքերով հրապարակվող տեղեկատվության մի շարք սահմանափակումներ: Հանդիպման այս հատվածին մասնակցել են նաեւ փորձագետներ եւ փոխնախարարներ: Արդեն հանդիպման կեսից քննարկումն ավելի փակ ռեժիմի է անցել, փոխնախարարները եւ փորձագետները հեռացել են, ՔՊ-ականները եւ Արմեն Գրիգորյանը մնացել են դեմ առ դեմ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ականներն իրենք են պահանջել, որ Արմեն Գրիգորյանն անձամբ գա ԱԺ ու ներկայացնի, թե հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման շուրջ բանակցություններն ինչ փուլում են: ՔՊ-ականները Ախ քարտուղարին անհանգստություն են հայտնել, թե, իրենց տպավորությամբ, խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններում, կարծես թե, առաջընթաց չկա, համենայնդեպս, իրենք ոչնչից տեղեկացված չեն: Արմեն Գրիգորյանը հանգստացրել է պատգամավորներին, որ բանակցություններն իրենց հունով ընթանում են: Ախ քարտուղարը ՔՊ-ականներին մանրամասն ներկայացրել է՝ այս պահի դրությամբ հայկական կողմն ինչի շուրջ է բանակցում Թուրքիայի ու Ադրբեջանի հետ: Գրիգորյանը, մասնավորապես, հայտարարել է, որ աշխատանքները հիմնականում տարվում են խաղաղության պայմանագրի ստորագրման շուրջ, ուսումնասիրում են Բաքվի փոխանցած նոր առաջարկները խաղաղության պայմանագրի տեքստի մասով, որպեսզի հասկանան՝ որ կետին համաձայնեն, որին՝ ոչ: ՔՊ-ամերձ մեր աղբյուրները հայտնեցին նաեւ, որ հանդիպումը թեժ է եղել հատկապես այն առումով, որ ՔՊ-ական հ/կ թեւը Արմեն Գրիգորյանին մեղադրել է, թե նա տապալել է իր առջեւ դրած «առաքելությունը», այն է՝ Ադրբեջանի հետ հնարավորինս շուտ խաղաղության պայմանագրի ստորագրումը եւ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելը: Այսպիսով, ՔՊ-ականները փորձել են «նեղը գցել» Ախ քարտուղարին ու բացատրություններ են պահանջել նրանից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գլխավոր դատախազությունն այս օրերին ստուգումներ է անում Սյունիքի եւ Վայոց ձորի բանակային կորպուսներում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՊՆ-ում շունչը պահած սպասում են ՀՀ գլխավոր դատախազության ուսումնասիրության արդյունքներին եւ կանխատեսում, որ նշված երկու մարզերի կորպուսների գործունեության մասով քրեական գործեր են հարուցվելու: Իսկ ինչո՞ւ են ընտրվել հենց այդ մարզերը: Հունվարի 26-ին Դատախազությունը պաշտոնապես հայտնեց, որ զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ Գրիգոր Էլիզբարյանը 2023 թվականի հունվարի 23-ին կայազորների դատախազներին կարգադրել է ուսումնասիրություն իրականացնել տիպային զորանոցի կառուցվածք չունեցող այն քաղաքացիական շենքշինություններում եւ կացարաններում, որտեղ 2020 թվականին եւ 2022 թվականին տեղի ունեցած մարտական գործողությունների հետեւանքով տեղակայվել են զինվորական անձնակազմերը: Եվ, ահա, ստուգումներին զուգահեռ, ՊՆ-ն սկսեց ազատումների շքերթ: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ ազատումներն ու դատախազության ստուգումները պատահական չեն, քանի որ իրավապահ համակարգը 2022 թվականի սեպտեմբերի 13-ին հակառակորդի հարձակման եւ զգալի առաջխաղացման մասով կասկածներ ունի, որին այս փուլում, երկրի անվտանգությունից ելնելով, չենք անդրադառնում:


Հռիփսիմե Սահակյան
24.07.2022 09:39:25
4
Առաջարկում եմ օրենքից հանել " դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց, այսինքն՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերվող կետը: Ինչ անենք, տղայիս վերցնեմ փախնե՞մ իմ երկրից առանց ետ նայելու: Առանց դա էլ չենք ապրում, գոյատեւում ենք: Ինչ եք ուզում մեր հաշմանդամ երեխեքից: Անիծվե՛ք դուք»: Եվ հետաքրքիր է, որ, ի պատասխան այսպիսի մեկնաբանության, գրվել է. «Ընդունվել է ի գիտություն: Նախագիծը կխմբագրվի»: Ընդ որում՝ այս նույն մեկնաբանությունն ավտոմատ կերպով կատարվում է բոլոր առաջարկների դեպքում, սակայն, բնականաբար, բոլոր առաջարկները չեն ընդունվում:
Ընդունվել է ի գիտություն. Նախագիծը կխմբագրվի

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ամիսներ առաջ հանրային քննարկման էր ներկայացվել «Կամավոր բժշկական ամլացում իրականացնելու կարգը եւ պայմանները հաստատելու մասին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 6-ի N 425 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Նախագծի նպատակն էր ապահովել բժշկական կազմակերպություններում կամավոր բժշկական ամլացման կարգի եւ պայմանների իրավական կարգավորում: Հանրային քննարկման ընթացքում ներկայացված են եղել տարաբնույթ առաջարկներ, որոնց գործադիրի կողմից տրված պատասխանները երբեմն զվարճալի են: Օրինակ՝ քաղաքացի Հռիփսիմե Սահակյանը ՀՀ առողջապահության նախարարության նախագծի տակ գրել էր. «Առաջարկում եմ օրենքից հանել դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց, այսինքն՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերվող կետը: Ինչ անենք, տղայիս վերցնեմ փախնե՞մ իմ երկրից առանց ետ նայելու: Առանց դա էլ չենք ապրում, գոյատեւում ենք: Ինչ եք ուզում մեր հաշմանդամ երեխեքից: Անիծվե՛ք դուք»: Եվ հետաքրքիր է, որ, ի պատասխան այսպիսի մեկնաբանության, գրվել է. «Ընդունվել է ի գիտություն: Նախագիծը կխմբագրվի»: Ընդ որում՝ այս նույն մեկնաբանությունն ավտոմատ կերպով կատարվում է բոլոր առաջարկների դեպքում, սակայն, բնականաբար, բոլոր առաջարկները չեն ընդունվում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳՎՈՒՄ Է

ԻՋԵՑՎԱԾ ՊԱՏՎԵՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը Սահմանադրության փոփոխության գործընթաց է նախաձեռնել: Արցախի նախագահը հրամանագիր է ստորագրել Սահմանադրության մեջ ռազմական դրության ժամանակ Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում Ազգային ժողովի կողմից նախագահի ընտրության եւ դրա առանձահատկությունների վերաբերյալ փոփոխության գործընթաց նախաձեռնելու մասին: Այսինքն՝ Սահմանադրության համապատասխան փոփոխությունից հետո Արցախի Ազգային ժողովին նախագահ ընտրելու լիազորություն կտրվի: Ինչպես հայտնում են Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից, փետրվարի 13-ին ԱՀ Սահմանադրության փոփոխության նախագիծը ներկայացվել է Ազգային ժողովի քննարկմանը:



«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանի հետ: Արցախի ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանը մեզ հետ զրույցում նշեց, որ նախագծում մի շարք խնդրահարույց դրույթներ կան: Նրա խոսքով՝ Ազգային ժողովին նախագահ ընտրելու լիազորություն տալը առանցքային կետ է, ուստի փոփոխությունը պետք է հանրաքվեի դրվեր: Արցախում կարծում են, որ այսպիսով Արայիկ Հարությունյանը կատարում է Հայաստանի իշխանությունների կողմից իջեցված պատվեր:

-Պարոն Գալստյան, արդեն ծանոթ եք սահմանադրական փոփոխությունների նախագծին. ի՞նչ խնդրահարույց կետեր եք արձանագրել սահմանադրական փոփոխությունների նախագծում, Ձեզ համար հասկանալի՞ է՝ ինչու Արայիկ Հարությունյանը հիմա որոշեց նման նախաձեռնություն սկսել:

-Արցախի գործող Սահմանադրության համաձայն՝ առանցքային կետերը պետք է փոփոխվեն հանրաքվեով, իսկ ԱԺ-ին նախագահ ընտրելու իրավունք վերապահելը բավականին առանցքային կետ է, ու այն առանց հանրաքվեի ԱԺ-ում փոփոխելը վտանգավոր է Սահմանադրության համար: Սահմանադրության առանցքային կետերի փոփոխությունը հանրաքվեով պետք է արվի. այս տրամաբանությունը խախտում է գործող Սահմանադրությունը, քանի որ նախագահ եւ պատգամավոր ընտրելը ժողովրդի իրավունքն է: Այս ճանապարհով գնալ եւ փորձել հանրությունից վերցնել այդ ձայնը՝ առանց հանրաքվեի, ինքնին վտանգում է գործող Սահմանադրությունը: Միեւնույն ժամանակ, անհասկանալի է բոլորիս համար՝ ինչու հենց հիմա եւ ինչու այս կետը պետք է փոփոխվի, քանի որ նմանատիպ կետ հանրաքվեի միջոցով նոր փոփոխությունների մեջ արդեն իսկ մտցված է, ուստի չգնալ հանրաքվեի, այլ առաջ ընկնել, այս շտապողականությունն անհասկանալի է: Ինչ-որ տեղ նաեւ մենք համոզվում ենք, որ իջեցված պատվեր է կատարում Արայիկ Հարությունյանը, քանի որ լայն քննարկումներ այս հարցով չի եղել, նախագիծը չի դրվել հանրային քննարկման: Արայիկ Հարությունյանը փորձում է պատվեր կատարել, իսկ այդ պատվերը բերել ու ԱԺ-ում անցկացնելն անընդունելի է մեզ համար:

-Ի՞նչ պատվեր եւ ու՞մ կողմից, պարոն Գալստյան, փակագծեր կբացե՞ք:

-Ես ավելի քան համոզված եմ, որ Հայաստանի իշխանությունների մոտ Արայիկ Հարությունյանի նկատմամբ վստահությունն իջել է, Հայաստանի իշխանությունները փորձում են այս ճանապարհով վերարտադրել իրենց իշխանությունն Արցախում, իսկ թե ում միջոցով, դեռ պարզ չէ, բայց կարծում եմ, մոտ ապագայում անուններ կհնչեն:

-Իսկ նախագիծը խորհրդարանում ե՞րբ է քննարկվելու:

-Դեռ պետք է ուղարկվի դատարան, դատարանն իր եզրակացությունը տա, նոր նախագիծը կմտնի լիագումար նիստ: Ինձ չի թվում, որ այս ամսվա մեջ կհասցնեն, երեւի թե մարտ ամսին նոր հնարավոր կլինի կյանքի կոչել այս ամենը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԲԱՔՎՈՒՄ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը փետրվարի 14-ին հանդիպել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցերով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի հատուկ ներկայացուցիչ Իգոր Խովաեւին: Հանդիպման մասին ադրբեջանական լրատվամիջոցները մանրամասներ չեն հայտնել, եւ միայն հանդիպման փաստն է արձանագրված: Այստեղ հետաքրքիր է, որ Իգոր Խովաեւը փետրվարի 9-ին Հայաստանում է եղել եւ, ըստ էության, այստեղ հանդիպումներից հետո է Ադրբեջան մեկնել: Հայաստանում Ռուսաստանի ԱԳ նախարարի հատուկ ներկայացուցիչը հանդիպումներ էր ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի, արտգործնախարար Արարատ Միրզոյանի եւ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ:

Վարչապետի աշխատակազմի տարածած պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ զրուցակիցներն անդրադարձել են Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին եւ դրա հաղթահարմանն ուղղված քայլերին: Փաշինյանն ընդգծել է Ադրբեջանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության հերթական խախտման փաստը եւ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունների լիարժեք իրականացման անհրաժեշտությունը: Նաեւ քննարկվել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հնարավորություններին ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին վերաբերող հարցեր:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՀՐԱՎԻՐՎԵՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ

Ազգային ժողովում փետրվարի 24-ին լսումներ կհրավիրվեն՝ աշխատանքային օրենսգրքի հետ կապված:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ քննարկվելու է, մասնավորապես, Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը: Լսումները կսկսվեն ժամը 11:00-ին եւ կտեւեն մինչեւ 16:00-ն:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԳԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը մինչեւ այս տարվա ապրիլի 1-ը կրկին գնալու է Ազգային ժողով: Մասնավորապես, նա պետք է ներկայացնի հաղորդում՝ ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Ամեն դեպքում, դա է նախատեսում «ԱԺ կանոնակարգ» օրենքի 1828-րդ հոդվածը. «Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է Կանոնակարգի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ»: Օրենքում նշվում է, որ այդ հարցն Ազգային ժողովում քննարկվում է հետեւյալ կարգով. «Մինչեւ 30 րոպե տեւողությամբ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս հարցն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, որից հետո նրան կարող են տրվել հարցեր. հարակից զեկուցում չի լինում, եթե Կանոնակարգով կամ Ազգային ժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ. մտքերի փոխանակություն. մինչեւ տասնհինգական րոպե տեւողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս հարակից եւ հիմնական զեկուցողները»: Այստեղ, սակայն, հետաքրքիր է այն, որ Աննա Վարդապետյանը, ըստ էության, իր հաղորդման մեջ ավելի շատ ներկայացնելու է նախորդ դատախազի՝ Արթուր Դավթյանի կատարած աշխատանքը, քանի որ Վարդապետյանն իր պաշտոնը ստանձնել էր սեպտեմբերին: Հետաքրքիր է՝ ինչպես իրենց կդրսեւորեն ՔՊ-ականները, կքննադատեն արդյոք, թե էլի հիացմունքով ելույթներ կունենան Արթուր Դավթյանի գործունեության մասին:

ՉԵՆ ՄԱՄՆԱԿՑԻ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) «Անխախտ եղբայրություն» զորավարժությունները, որոնք ի սկզբանե նախատեսվում էր անցկացնել Հայաստանում, կկայանան Ղրղզստանում: Այդ մասին փետրվարի 14-ին հայտարարել է ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ Անատոլի Սիդորովը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանը չի մասնակցի այդ զորավարժություններին: Հիշեցնենք՝ հունվարի 10-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Հայաստանում ՀԱՊԿ խաղաղապահ զորամիավորումների զորավարժություններ չեն անցկացվի. «Հայաստանի պաշտպանության նախարարը ՀԱՊԿ միավորված շտաբին գրավոր տեղեկացրել է, որ մենք ՀՀ-ում նման զորավարժություն անցկացնելը այս իրավիճակում նպատակահարմար չենք համարում: Այդ զորավարժությունները համենայնդեպս այս տարի Հայաստանում չեն կայանա»: Դրանից հետո ՀԱՊԿ մամուլի քարտուղար Վլադիմիր Զայնետդինովը, անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ ՀՀ-ում ՀԱՊԿ զորավարժություններ չանցկացնելու հայտարարությանը, նշել էր, թե ըմբռնումով են մոտենում Հայաստանում ստեղծված իրավիճակին, որը կարող է թույլ չտալ ընթացիկ տարում լիարժեք անցկացնել ՀԱՊԿ-ի պլանավորված խաղաղապահ զորավարժությունները: Եվ, ահա, երեկ պարզ դարձավ, որ դրասնք կանցկացվեն Ղրղզստանում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը խորհրդարանում հյուրընկալել է Արցախի Հանրապետության մարդու իրավունքների ներկա եւ նախկին պաշտպաններ Գեղամ Ստեփանյանին (Արցախի Մարդու իրավունքների պաշտպան / Artsakh Ombudsman) եւ Արտակ Բեգլարյանին: Քննարկել ենք Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետեւանքով առաջացած հումանիտար աղետի հաղթահարման հնարավոր ուղիները, արցախահայության իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր: Մշտապես կանգնած եմ Արցախի եւ մեր հայրենակիցների կողքին:

ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ ԼՈՆԴՈՆ

Միջխորհրդարանական միությունում, Միացյալ Թագավորության խորհրդարանի խմբի ղեկավարի հրավերով, 2023 թվականի մարտի 5-9 Լոնդոն կգործուղվեն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Էդուարդ Աղաջանյանը, Սարգիս Խանդանյանը, Մարիա Կարապետյանը, Մարիամ Պողոսյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը եւ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ գործուղման հետ կապված օրապահիկի եւ ճանապարհածախսի վճարումը կատարվելու է ՀՀ պետբյուջեի հաշվին, իսկ գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարելու է հրավիրող կողմը:

Ի՞ՆՉ Է ԱՐԵԼ ԻՐԱՆՈՒՄ

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հունվարի 19-21-ը գտնվել է Իրանում եւ մասնակցել է Ազդեցիկ կանանց առաջին միջազգային համագումարին: Նախ նշենք, որ այդ համագումարին մասնակցելու նպատակով Իրանում գտնվել է նաեւ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը:

ArmLur.am-ը առողջապահության նախարարի ներկայացրած հաշվետվությունից տեղեկացավ, որ, համագումարին մասնակցելուց բացի, Անահիտ Ավանեսյանը հունվարի 21-ին այցելել է ԻԻՀ առողջապահության եւ բժշկական կրթության նախարարություն, որտեղ հանդիպել է նախարար Բահրամ Էյնոլլահիին: Բացի այդ, որոշում է ընդունվել ստեղծել աշխատանքային խումբ, որը կհամագործակցի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ, իսկ, ահա, հաջորդ տարի համագումարը կանցկացվի Հայաստանում:

Աննա Հակոբյանի այցի եւ հանդիպումների մասին տեղեկատվություն կարող էինք ստանալ միայն սոցիալական ցանցի իր էջում հրապարակված լուսանկարներից, սակայն ArmLur.am-ին նաեւ այլ մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, ոչ՛ տեղի հայ համայնքը, ո՛չ էլ հայկական եկեղեցին չեն ընդունել Աննա Հակոբյանին: Տեղեկացանք, որ վարչապետի տիկինն անգամ խուսափել է այցելել հայկական եկեղեցի, որպեսզի այնտեղի հայերին չհանդիպի, փոխարենը Իրան ժամանած մյուս հյուրերի հետ այցելել է մզկիթ ու այնտեղ միջոցառումների մասնակցել:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՓԱԿԵԼ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՐԱԿԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«Թաթոյան» հիմնադրամը նոր տեսանյութ է ներկայացրել, որտեղ ապացույցներով հիմնավորում է արդեն 2 ամսից ավելի Արցախը Հայաստանին ու աշխարհին կապող միակ ճանապարհը փակած Ադրբեջանի կառավարության «էկոակտիվիստ» գործակալների իրական մտադրությունները: Տեսանյութում նրանք վիրավորում են Արցախի բնիկ ժողովրդին, հրճվում են ճանապարհը փակելու առթիվ:

Մինչ այդ նույն հիմնադրամն ապացույցներով ներկայացրել էր, որ Արցախ-Հայաստան ճանապարհը փակած ադրբեջանական «բնապահպան ակտիվիստ առաջնորդները» ուղիղ ֆինանսավորվում են Ադրբեջանի կառավարությունից կամ իշխանությունների հետ առնչություն ունեցող կազմակերպություններից: Որոշ դեպքերում նրանք ֆինանսավորվում են Ադրբեջանի առաջին փոխնախագահ եւ առաջին տիկին Մեհրիբան Ալիեւայի ղեկավարած Հեյդար Ալիեւի ֆոնդից:

Բացի այդ, վերլուծությունները ցույց են տալիս, որ Արցախ-Հայաստան ճանապարհը փակած ադրբեջանական «բնապահպան ակտիվիստ առաջնորդները» իրենց սոցցանցերի էջերում առանձնակի ջանասիրությամբ են տարածում Ալիեւների ընտանիքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարները, անում են հակահայկական ու հայատյաց գրառումներ, քարոզ: Գլխավոր հարցն այն է, որ նրանք ապահովում են ադրբեջանական կառավարական քաղաքականությունը:

Ընդամենը մեկ օրինակ. Թելման Քասիմովը, որը «ակցիայի» առաջնորդներից է, ճանապարհը փակելու վայրում հայերենով կոչեր է հնչեցնում, միասին ապրելու հորդորներ անում, բայց «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում հպարտությամբ տեղադրում է Հայաստանի ու Արցախի դրոշը ոտքի տակ գցած ադրբեջանական զինվորականների լուսանկարները, ուրախանում հայկական կողմի մարդկային կորուստներով: Փաստերն ապացուցում են, որ նա իրականում հայատյաց զինվորական է, ըստ հավաստի աղբյուրների՝ռազմական հատուկ հետախուզական ծառայության սպա, որը նաեւ ակտիվորեն քարոզում է Ադրբեջանի նախագահի ռազմատենչ հայտարարությունները:

Նա իր սոցիալական ցանցերի նկարներում անթաքույց ցուցադրում է «Գորշ գայլեր» ահաբեկչական-ազգայնական խմբի հետ առնչությունը, հպարտությամբ լուսանկար է հրապարակում հայ սպա Գուրգեն Մարգարյանին քնած ժամանակ կացնով սպանած եւ Հունգարիայում ցմահ դատապարտված Ռամիլ Սաֆարովի հետ:

Ակցիայի մյուս «առաջնորդների» դեպքում եւս նմանատիպ պատկեր ենք արձանագրել, որոնց մասին իրական տեղեկությունները լուսանկարներում են:

Հետեւաբար բացարձակ ճիշտ է այն պնդումը, որ Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը փակելը եւ Արցախը շրջափակելը որեւէ բնապահպանական նպատակ չունի. այն արցախահայության բնաջնջման, արտաքին աշխարհից մեկուսացնելու ադրբեջանական հանցավոր քաղաքականության մաս է, հերթական փորձը միջազգային կանոնների բացարձակ խախտումով ճնշելու արցախահայության ինքնորոշման բացարձակ լեգիտիմ իրավունքը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Սիրիա գործուղված Հայաստանի փրկարարական ջոկատն ավարտել է իր առաքելությունը եւ վերադառնում է հայրենիք:

«Հալեպ ժամանած փրկարարական խումբը, ավարտելով իր առաքելությունը, վերադարձավ հայրենիք»,- ասված է Հալեպում Հայաստանի գլխավոր հյուպատոսության «Ֆեյսբուք»-ի էջի հրապարակման մեջ:

Հիշեցնենք, որ Սիրիայում տեղի ունեցած աղետալի երկրաշարժից հետո Հայաստանը 29 հոգուց բաղկացած փրկարարական խումբ էր ուղարկել Սիրիա:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐ Է ՀԱՆՁՆԵԼ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Լատվիայի Հանրապետության նորանշանակ դեսպան Էդիտե Մեդնեն (նստավայրը՝ Թբիլիսի):

Նախագահ Խաչատուրյանը, շնորհավորելով դեսպանին նշանակման կապակցությամբ, արգասաբեր աշխատանք է մաղթել եւ համոզմունք հայտնել, որ դեսպանն իր դիվանագիտական առաքելության ընթացքում իր նպաստը կբերի հայ-լատվիական համագործակցության զարգացման գործում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Լատվիայի փոխգործակցության բնագավառներն ու հեռանկարները, մասնավորապես՝զարգացման մեծ ներուժ ունեցող բարձր տեխնոլոգիական ոլորտը:

Հանդիպման ավարտին երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավոր ջանքերը ներդնել ինչպես Եվրամիության շրջանակներում համագործակցության զարգացման ուղղությամբ, այնպես էլ երկկողմ բարձր մակարդակի քաղաքական երկխոսության կարեւորությանն ու փոխայցելություններին: Այս նպատակների իրականացման համար շեշտվել է դիվանագիտական ներկայացուցչություններ ունենալու կարեւորությունը:

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՀՍՏԱԿԵՑՆԵԼ

«Հայկական կողմն աշխատում է խաղաղության պայմանագրի հստակության վրա»,- երեկ լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում նշել էր ԱԽ քատրուղար Արմեն Գրիգորյանը: Նա խորհրդարանում հանդիպում էր ունեցել ՔՊ խմբակցության հետ:

«Հայաստանը կողմ է, որ միջազգային տեսանելի մեխանիզմի շրջանակում քննարկումներ տեղի ունենան Ստեփանակերտի ու Բաքվի միջեւ: Հայաստանը շարունակում է աշխատել իր միջազգային գործընկերների հետ, որ այս մեխանիզմը կայանա: Այս մեխանիզմին կարող է անդրադարձ լինել խաղաղության պայմանագրում»,- նշեց նա:

Գրիգորյանը խոսեց նաեւ խաղաղության պայմանագրի քննարկումների շուրջ Հայաստանի մոտեցումների մասին: «Միջազգային տեսանելի մեխանիզմ պետք է ստեղծվի, որպեսզի Բաքվի ու Ստեփանակերտի միջեւ քննարկումներ տեղի ունենան անվտանգության ու իրավունքների շուրջ: Հայաստանը ստացել է իր առաջարկած տեքստին պատասխան, հիմա հայկական կողմն է աշխատում այդ տեքստի վրա, ու հնարավորինս շուտ այն պատրաստ կլինի, ու պատրաստ կլինենք այն փոխանցել Ադրբեջանին: Այս պահին չեմ կարող ասել, թե այդ փոխանցումը ինչպես տեղի կունենա: ԼՂ-ի մասին հիշատակում կա, բայց պետք է հաշվի առնել, որ այդ փաստաթուղթը վերջնական չէ. բանակցություններ են ընթանում»,- նշեց նա:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է 863 ԴԵՊՔ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական անվտանգությունը յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության անբաժանելի մասն է, իսկ ստվերային տնտեսությունը կարելի է սահմանել նաեւ որպես տնտեսական անօրինական գործունեություն՝ ուղղված որեւէ տնտեսվարող սուբյեկտի օգտին տնտեսական շահույթի ստացմանը՝ ի հաշիվ այլ անձանց, ընկերությունների կամ ի վնաս պետության:

Որպես տնտեսական անվտանգության լրջագույն սպառնալիք՝ էապես կարեւորվում է ստվերային տնտեսության կրճատման հիմնախնդիրը, եւ այս նպատակով 2022թ.-ի ապրիլի 12-ին ընդունված՝ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով էապես խստացվել են ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար սահմանված պահանջների չկատարման համար նախատեսված պատասխանատվության չափերը: Այսպես, օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության դեպքում այժմ գանձվում է տուգանք՝ այդ ապրանքի գնի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից՝ նախկին 200 հազարի փոխարեն, իսկ մեկ տարվա ընթացքում խախտման երկրորդ փաստ արձանագրվելու դեպքում՝ անփաստաթուղթ ապրանքների գնի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 2 միլիոն դրամից՝ նախկին 500 հազարի փոխարեն: Նույն փոփոխություններով խախտման երրորդ եւ ավելի փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ անփաստաթուղթ ապրանքների գնի 200 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 10 միլիոն դրամից:

Ընդունված իրավանորմով պայմանավորված՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իրեն վերապահված գործառույթների շրջանակում մշտապես ոլորտային հսկողություն է իրականացնում՝ հարկային իրավախախտումների կանխման ու բացահայտման ուղղությամբ: Անընդհատ ուսումնասիրելով զարգացող բիզնես գործընթացների յուրահատկությունները՝ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունում, ըստ ոլորտային բաժանման, մշակվել, ներդրվել եւ կիրառվել են ռիսկային գործարքների, ստվերային շրջանառության եւ ընդհանրապես հարկային իրավախախտումների բացահայտմանն ուղղված նոր մոտեցումներ: Արդյունքում 2022թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին, առանց հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքերի բացահայտմանն ուղղված միջոցառումների շրջանակում, արձանագրվել է 863 խախտում. առաջադրված տուգանքի գումարը կազմել է շուրջ 598.3 մլն դրամ, որից օրենսգրքով կատարված փոփոխություններից՝ պատժամիջոցների չափը խստացնելուց հետո արձանագրվել է 444 խախտում. առաջադրված տուգանքի գումարը կազմել է շուրջ 421.8 մլն դրամ:

Նախորդ տարի երկու եւ ավելի առանց հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ապրանքների տեղափոխման կամ մատակարարման խախտումներ թույլ տված տնտեսվարող սուբյեկտների թիվը գերազանցում է 6 տասնյակը: ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը տնտեսական գործունեություն իրականացնող անձանց հորդորում է պահպանել հարկային կարգապահությունը, ամբողջությամբ հայտարարագրել հարկման օբյեկտներն ու հարկման բազաները եւ այդ նպատակով բացառել առանց հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքերը:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում կատարված քննությամբ բացահայտվել է Երեւան քաղաքի Կոմիտաս փողոցում 47 համարի երթուղային ավտոբուսի սրահում տեղի ունեցած խուլիգանության եւ ուղեւորներից մեկի դանակահարության դեպքը: Փաստի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված քննչական գործողությունների, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են հիշյալ ուղեւորին վնասվածքներ պատճառելու՝ էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ նրան ծեծի ենթարկած եւ վնասվածքներ պատճառած երկու անձանց ինքնությունը:

Վերջիններս 53 եւ 23 տարեկան տղամարդիկ են, որոնց գործողություններն անհատականացվել են: Քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 46-ամյա ուղեւորին վիճաբանության ժամանակ կտրած- ծակած վնասվածքներ հասցրել է 53-ամյա տղամարդը: 2023թ. հունվարի 31-ին՝ ժամը 13:45-ի սահմաններում, 47 համարի երթուղային ավտոբուսի սրահում ուղեւորներից երկուսը, իրենց անձի ենթադրյալ առավելությունը ընդգծելու մոլուցքով տարված, հասարակության եւ բարոյականության նորմերի նկատմամբ բացահայտ անթաքույց արհամարհանք դրսեւորելով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, տեւական ժամանակ հայհոյանքներ հնչեցնելով եւ երթուղային ավտոբուսում գտնվող ուղեւորների անդորրը խաթարելով, ավտոբուսում գտնվող ուղեւորների ներկայությամբ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, խմբի կազմում կատարել խուլիգանություն:

Խուլիգանական դրդումներով, մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ նրանք վիճաբանել են նույն ավտոբուսի 46-ամյա ուղեւորի հետ, որի ժամանակ երկուսով ոտքերով եւ ձեռքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել նշված ուղեւորի մարմնի տարբեր մասերին, իսկ 53-ամյա տղամարդն իր մոտ գտնվող դանակով հարվածներ է հասցրել հիշյալ ուղեւորի որովայնի շրջանին՝ վերջինիս պատճառելով կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքներ: Կատարված հանցավոր արարքների պատճառով նաեւ խափանվել է երթուղայինի բնականոն աշխատանքը, ուղեւորների մի մասը հեռացել են երթուղայինից, իսկ նշված երկու անձինք դիմել են փախուստի:

Դեպքից հաշված օրեր անց վերջիններս հայտնաբերվել եւ ձերբակալվել են: 53-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 10-րդ կետերով, իսկ 23-ամյա երիտասարդին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ վերջիններիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որոնք բավարարվել են: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԾԱՆՐ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ

Փետրվարի 13-ին՝ ժամը 23:11-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Ազատամարտիկների փողոցի 3-րդ նրբանցքի տներից մեկում: ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ հրդեհի բարդության «1 ԲԻՍ» կանչով է եղել: Հրդեհը մեկուսացվել է փետրվարի 14-ին՝ ժամը 00:06-ին, մարվել՝ 00:43-ին:

Փրկարարները ննջասենյակի հատակին հայտնաբերել են քաղաքացի Օ. Մ.-ի (ծնված 1951 թ.) դին, տուժած Վ. Մ.-ին (ծնված 1978 թ.) դուրս բերել տանից, ում բժիշները տեղում ցուցաբերել են համապատասխան բուժօգնություն: Տուժածներ Ա. Մ.-ն (ծնված 1946 թ.) եւ Ա.. Մ-ն (ծնված 1981 թ.) հոսպիտալացվել են «Էրեբունի» ԲԿ, այնուհետեւ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, որտեղ բժիշկները նրանց առողջական վիճակը գնահատել են ծանր: Այրվել է տան (մոտ 120 քմ) ննջասենյակը՝ գույքով (մոտ 30 քմ):

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

Երեկ Հակակոռուպցիոն դատարանում ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի, ԳՇ նախկին պետ Արտակ Դավթյանի եւ ՊՆ մյուս պաշտոնյաների դեմ հարուցված քրեական գործով հերթական նիստն էր:

ArmLur.am-ը արձանագրեց, թե ինչպես ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին Ազգային անվտանգության ծառայությունից մեքենայով տեղափոխեցին Հակակոռուպցիոն դատարան:

Ինչպես հայտնի է, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ:

Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին:

Քրեական գործով այս պահին «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հինարկում՝ «ԿԳԲ-ի պադվալում» են գտնվում ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը եւ Դավիթ Գալստյանը, իսկ մյուս անձինք ազատության մեջ են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 10-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 136 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԻՍՏ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐ

Արցախի Հանրապետության պետական նախարար, Օպերատիվ շտաբի պետ Ռուբեն Վարդանյանի ղեկավարությամբ՝ փետրվարի 14-ին տեղի ունեցած շտաբի նիստում քննարկվել են մի շարք հրատապ հարցեր:

Ներկայացվել է պարենային ապրանքների, դեղորայքի, վառելիքի, ինչպես նաեւ ենթակառուցվածքների ոլորտներում իրավիճակը:

«Արցախէներգո» ՓԲ ընկերության տնօրեն Անդրանիկ Խաչատրյանը նշել է, որ գազամատակարարման բացակայության եւ ցուրտ եղանակի պայմաններում էներգետիկ համակարգը չի դիմանում ծանրաբեռնվածությանը, ավելացել են վթարները, բաշխիչ ցանցը գտնվում է ծայրահեղ վիճակում: Պետնախարարը հանձնարարել է իրավիճակի հետ կապված առաջարկներ ներկայացնել՝ պատասխանատու բոլոր կառույցների հետ քննարկելու եւ ստեղծված պայմաններում հնարավորինս արդյունավետ լուծումներ գտնելու համար: Սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարար Արմեն Մանգասարյանը ներկայացրել է շրջափակման հետեւանքների մեղմմանն ուղղված աջակցության սոցիալական միջոցառումների ընթացքը՝ տեղեկացնելով, որ շահառուների դիմումների ներկայացման գործընթացը մեկնարկել է:

Պետնախարարը հանձնարարել է աջակցության միջոցառումների վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկում ապահովել, որպեսզի բոլոր շահառուները կարողանան ժամանակին ստանալ նախատեսված փոխհատուցումները: Արմեն Մանգասարյանը տեղեկացրել է նաեւ, որ ընթացքում են Արցախ հասած բարեգործական որոշ բեռների բաշխման աշխատանքները: Բարեգործական եղանակով ստացված պարենային ապրանքները տրամադրվում են բացառապես անվճար սոցիալապես անապահով խմբերին: Պետնախարար Ռուբեն Վարդանյանը կարեւորել է գործընթացի առավելագույնս թափանցիկ իրականացումը՝նշելով, որ այն պետք է պարզ եւ հասկանալի լինի ինչպես բեռն ուղարկած բարեգործական կազմակերպությունների, այնպես էլ հասարակության համար: Նրա խոսքով՝ բնակչությունը պետք է պատշաճ իրազեկվի՝ ում եւ ինչ սկզբունքով է հատկացվում բարեգործական բեռը, որպեսզի տուրք չտա տարբեր տեսակի ապատեղեկատվությանն ու շահարկումներին:

Նիստում անդրադարձ է եղել նաեւ գների վերահսկողության խնդրին: Տեղեկացվել է, որ հաստատվել է «Ապրանքների շրջանառության, այդ թվում՝ իրացման գների ձեւավորման եւ վերահսկողության հատուկ կարգը», որով Պետական եկամուտների կոմիտեին, Պետական տեսչությունների կառավարման կոմիտեին, Հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովին, շրջաններում վարչակազմերին գների վերահսկողության գործառույթներ են վերապահվում:

Պետնախարարը հանձնարարել է պատասխանատու մարմիններին շարունակել դիտանցումներն ու գնագոյացման ուսումնասիրությունների աշխատանքները, ինչպես նաեւ վերլուծել գնաճային հնարավոր դրսեւորումների պատճառները:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Բացահայտվել են առերեւույթ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի շրջանառության, իրացման դեպքեր. մեղադրանք է ներկայացվել երեք անձի:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնված 2 տարբեր քրեական վարույթների շրջանակներում իրականացված վարութային, ապացուցողական, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում բացահայտվել են առերեւույթ խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի շրջանառության դեպքեր:

Նշված վարույթներից մեկի շրջանակում 2023թ. փետրվարի 9-ին՝ ժամը 18:40-ին, ապօրինի թմրամիջոց պահելու, օգտագործելու եւ իրացնելու հիմնավոր կասկածանքով Երեւան քաղաքի Քանաքեռ ՀԷԿ 11 հասցեի մոտից ձերբակալել եւ ոստիկանության բաժին են տեղափոխվել Մասիս քաղաքի 23-ամյա երկու բնակիչներ: Ձերբակալման ժամանակ վերջիններս փորձել են փախուստի դիմել, որի ժամանակ գետնին են նետել դեղնականաչավուն ժապավենով փաթաթված բազմաթիվ փաթեթներ, սակայն նրանց փախուստի փորձը կանխվել է:

Հիշյալ հասցեի հարակից ճանապարհահատվածի զննությամբ հայտնաբերվել է թվով 42 փաթեթ: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված՝ դեպքի վայրի զննությամբ հայտնաբերված թվով 126.01 գրամ ընդհանուր քաշով 42 փաթեթներից 6-ի մեջ առկա ընդհանուր 5.71 գրամ զանգվածը «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց է:

Մյուս փաթաթուկների պարունակության մասով փորձաքննության եզրակացությունը դեռեւս չի ստացվել:

Պարզվել է, որ 23-ամյա երիտասարդները, խմբի կազմում նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով հիշյալ օրը Զրվեժ թաղամասի դաշտամիջյան հատվածում «Տելեգրամ» հավելվածի անհայտ օգտատիրոջից ապօրինի ձեռք են բերել եւ պահել թմրամիջոցը:

Վարույթն իրականացնող քննիչի կողմից 23-ամյա երիտասարդներին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: 2022թ. փետրվարի 11-ին միջնորդություններ են ներկայացվել դատարան վերջիններիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Միջնորդությունները բավարարվել է մասնակի. մեղադրյալների նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը եւ 1.000.000 ՀՀ դրամի չափով գրավը: Մյուս քրեական վարույթի շրջանակներում կատարված քննությամբ պարզվել է, որ օպերատիվ տեղեկությունների իրացման արդյունքում 2023թ.-ի փետրվարի 11-ին Երեւան քաղաքի Նաիրի Զարյան փողոցում ապօրինի թմրամիջոց պահելու եւ իրացնելու համար ձերբակալվել է 25-ամյա երիտասարդ: Վերջինիս անձնական խուզարկությամբ եւ ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է 32 հատ փաթեթներ՝ լցված դեղնականաչավուն զանգվածներով, որոնց ընդհանուր քաշը փաթեթների հետ միասին կազմել է շուրջ 33.5 գրամ, իսկ գրպանում հայտնաբերվել է բժշկական կաթուցիչ՝ պատերին մոխրացած հետքերով: Փորձաքննության նախնական եզրակացության համաձայն՝փաթեթներից 14-ը՝ 14.22 գրամ ընդհանուր քաշով, հանդիսացել է «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, մյուսներով փորձաքննությունը շարունակվում է: Երեւան քաղաքի 25-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով՝ դեռեւս չպարզված հանգամանքներում իրացնելու նպատակով, շահադիտական դրդումներով խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու եւ ապօրինի պահելու համար: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԵՐ ԿՀԱՆՎԵՆ ԱՃՈՒՐԴԻ

Հայաստանի Հանրապետության դասական դեղարտամենտին ամրացված, պետական սեփականություն հանդիսացող եւ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող, 626.55 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը, ինչպես նաեւ դրա զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար հատկացված, բնակավայրերի նպատակային նշանակությամբ 0.0936 հեկտար մակերեսով հողամասը հանվել է աճուրդի:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2022 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ գույքի գնահատված շուկայական արժեքը 99 մլն դրամ է, իսկ հատկացված հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը՝ 15 մլն դրամ:

Ըստ այդմ, աճուրդի մեկնարկային գինը կլինի 99 մլն դրամ: Բացի այդ, սահմանվել է աճուրդին մասնակցելու նախավճարը՝ գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով՝ 4 մլն 950 հազար դրամ, որը աճուրդի հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս եւ գնորդի կողմից հետագա վճարումները կատարելուց հրաժարվելու դեպքում վերադարձման ենթակա չէ ու փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Բացի այդ, տեղեկացանք, որ առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կարող է կազմակերպվել եւս երեք աճուրդ՝գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:

«Հատուկ լեռնափրկարար ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության տրանսպորտային միջոցները կտրվեն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության ընկերության՝ 297 մլն գնահատված ակտիվներ ունեցող (ընկերության գտնվելու վայրն է՝ ք. Երեւան, Դավթաշեն, 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8) 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցվելու է որպես ամբողջական մեկ միավոր՝ դասական աճուրդով:Ընկերության պետական բաժնետոմսերի աճուրդով մասնավորեցման մեկնարկային գինը կազմում է 275 մլն դրամ: Ընկերության գնահատված պարտավորությունները 2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կազմել են 20 մլն դրամ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանվում է աճուրդով մասնավորեցման ենթակա գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Գնորդի կողմից մուծված նախավճարը ներառվում է առաջարկվող գնի մեջ: Հիշեցնենք, որ դեռ 2021 թվականին խորհրդարանը հավանություն էր տվել «Հատուկ լեռնափրկարար ծառայության» մասնավորեցման ծրագրին: Հիմնավորման մեջ նշվել էր, թե մասնավորեցման արդյունքում ինչ-որ չափով կնվազի ընկերության՝ որպես պետական կառույցի գերիշխող դիրքը ոլորտում, որի հետեւանքով կստեղծվեն լեռնափրկարար ծառայություն մատուցող կազմակերպություններ, ծառայության մատուցումը կդառնա մրցակցային, խթան կհանդիսանա ավելի մատչելի եւ որակյալ ծառայության մատուցման համար:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ՃՏՊ. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Ուսուցիչների վարձատրության բարձրացման քաղաքականության շրջանակում 2023 թ. պետական բյուջեով մի քանի նոր նախաձեռնություններ են նախատեսված: Հավելավճարներ կտրամադրվեն գյուղական մինչեւ հարյուր աշակերտ ունեցող դպրոցների 4418 ուսուցիչների՝ նրանց վարձատրությունը հասցնելով մեկ դրույքաչափի՝ անկախ դասավանդվող ժամերի քանակից: Հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական առարկաներ դասավանդող 8135 ուսուցիչներին կտրամադրվի լրացուցիչ հավելավճար՝ նպատակ ունենալով խրախուսել նոր ուսուցիչների մուտքը դպրոցներ եւ լրացնել առկա թափուր տեղերը: Վերանայվել է բազմահամակազմ դասարանների ձեւավորման սկզբունքը, որով փոքր դպրոցներում յուրաքանչյուր երեխայի համար կապահովվի լիարժեք դասաժամ՝ բոլոր առարկաների ուսուցման համար: Բազմահամակազմ դասարան կձեւավորվի միայն արվեստի եւ ֆիզկուլտուրայի ժամերին, ըստ այդմ՝ մեկ ժամի համար ուսուցիչներին 50-75 % հավելավճար: Ծրագիրը մեկնարկել է Սյունիքի մարզի 76 դպրոցներում:

ՁԵՌՔ Է ԲԵՐՎԵԼ ՆՈՐ ՍԱՐՔ

Արդարադատության նախարարի տեղակալ Լեւոն Բալյանը Քրեակատարողական ծառայության ղեկավար Սերգեյ Ատոմյանի եւ «Քրեակատարողական բժշկություն կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավար Կամո Մանուկյանի ուղեկցությամբ շրջայց է կատարել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում: Լեւոն Բալյանը, մասնավորապես, ծանոթացել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում առկա նոր սարքավորմանը:

Տուբերկուլոզի առավել արդյունավետ ախտորոշման, ինչպես նաեւ նոր դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով ձեռք է բերվել սարք, որն արհեստական բանականության օժանդակությամբ հայտնաբերում է թոքային տուբերկուլոզը՝ մեծապես դյուրացնելով տուբերկուլոզի կասկած ունեցող շահառուների շրջանում սքրինինգի եւ տրիաժի իրականացումը: Այս նորագույն տեխնոլոգիայի շնորհիվ նվազագույնի է հասնում կրծքավանդակի թվային ռադիոգրաֆիկ հետազոտության մեկնաբանման ընթացքում մարդու կողմից հնարավոր սխալների թիվը:

CAD տեխնոլոգիայի կիրառումն առավել հասանելի կդարձնի տուբերկուլոզի արագ ախտորոշումը, ինչպես նաեւ թոքերի եւ այլ օրգան համակարգերի թվային ռենտգենոգրաֆիկ հետազոտություններն ազատազրկված անձանց շրջանում ազատազրկման վայրերում: Սարքավորումը ձեռք է բերվել «Գլոբալ» հիմնադրամի ֆինանսական աջակցության շնորհիվ:

Նախարարի տեղակալը ծանոթացել է ազատությունից զրկված անձանց եւ հանրային պաշտպանների հեռավար կապն ապահովելու համար նախատեսվող սենյակի շինարարական աշխատանքներին, ազատությունից զրկված անձանց պահման պայմաններին եւ զրուցել դատապարտյալների հետ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ

Եվրոպայի խորհրդի քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը (ՔԴԵԴ) ընդունում է հայտեր 2023 ուսումնական տարվա ընթացքում Հայաստանում կազմակերպվելիք միջոցառումներին (սեմինարներ, քննարկումներ, հանդիպումներ եւ այլն) մասնակցելու համար: Միջոցառումները բազմաթեմատիկ են, վերաբերելու են ամենաակտուալ խնդիրների եւ նպաստելու են մասնակիցների ինտելեկտուալ առաջընթացին: Եվս մեկ միջոցառում նախատեսվում է Ստրասբուրգում (Ֆրանսիա), որի մասնակիցների ընտրության պայմանների մասին կհայտարարվի լրացուցիչ:

ՔԴԵԴ-ը Քաղաքական դասընթացների դպրոցների Եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ է, քաղաքականապես չեզոք, չի հարում քաղաքական որեւէ հոսանքի, կուսակցության, խմբի կամ անհատի:

ՔԴԵԴ-ը Հայաստանում ստեղծված առաջին քաղաքական դպրոցն է եւ գործում է արդեն 18 տարի:

ՔԴԵԴ-ի նպատակն է օժանդակել երիտասարդ քաղաքական եւ հանրային գործիչների իմացությունների ընդլայնմանը եւ ժողովրդավարական մշակույթի խորացմանը:

ՔԴԵԴ-ի հայաստանյան միջոցառումներին հրավիրվում են հանրապետության լավագույն էքսպերտները, օտարերկրյա փորձագետներ, դեսպաններ:

Ստրասբուրգյան սեմինարներին դասախոսություններով հանդես են գալիս պետությունների, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, եվրոպական երկրների կառավարությունների ղեկավարներ եւ անդամներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, եվրոպական առաջատար համալսարանների դասախոսներ եւ այլք:

ՔԴԵԴ կարող են դիմել խորհրդարանի, ավագանիների անդամները, նախագահի, կառավարության եւ ԱԺ աշխատակազմերում, նախարարություններում եւ նրանց ստորաբաժանումներում, հասարակական կազմակերպություններում, դատաիրավական համակարգում, տարածքային եւ տեղական կառավարման մարմիններում, բիզնեսում եւ տնտեսվարող սուբյեկտներում, ԱԺ-ում ներկայացված կուսակցություններում պատասխանատու դիրքեր զբաղեցնողները, քաղծառայողները, միջազգային կազմակերպությունների աշխատակիցները, ինչպես նաեւ լրագրողները, վերլուծաբանները, քաղաքագիտության ոլորտի մասնագետները:

Հայտատուն պետք է՝

1. լինի 23-ից մինչեւ 40 տարեկան,
2. ունենա երկու տարուց ոչ պակաս (2021-2023թթ. ներառյալ) մասնագիտական աշխատանքային ստաժ: Ուսումնառության, զինվորական ծառայության, կամավորական աշխատանքի ժամանակահատվածը չի համարվելու մասնագիտական ստաժ,
3. աշխատելիս լինի,
4. լինի Եվրոպայի խորհրդի որեւէ անդամ-պետության լիիրավ քաղաքացի:

Անգլերենի կամ ֆրանսերենի իմացությունը նախընտրելի է:

Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցի կազմակերպելիք միջոցառումներին մասնակցել ցանկացողները պետք է պարտադիր ներկայացնեն.

1. դիմում-հարցաթերթիկ (հատուկ ձեւ), որի բոլոր կետերը ենթակա են պարտադիր լրացման,
2. մեկ լուսանկար (փակցնել դիմում-հարցաթերթիկին),
3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը: Նույնականացման քարտի կամ կենսաչափական անձնագրի դեպքում՝ նաեւ տեղեկանք հաշվառման վայրի վերաբերյալ),
4. ինքնակենսագրություն (CV),
5. տեղեկանք աշխատավայրից (հատուկ ձեւ)՝ պարտադիր կնքված ու ստորագրված,
6. հավաստագիր (հատուկ ձեւ):

Ըստ անհատական դեպքի՝ կարող են պահանջվել այլ փաստաթղթեր եւս:

Հայտատուին երաշխավորող անձը/մարմինը պատասխանատվություն է կրում իր կողմից ՔԴԵԴ գործուղվող հայտատուի համար: Մասնավոր անձանց մասնակցություն ՔԴԵԴ ծրագրին չի նախատեսվում:

Նախնական մրցույթի փուլը (փաստաթղթերի ուսումնասիրություն) հաղթահարած թեկնածուներին կտրվի քննություններին մասնակցելու հնարավորություն:

ՔԴԵԴ-ի հայաստանյան միջոցառումները կազմակերպվում են ինչպես Երեւանում, այնպես էլ մայրաքաղաքից դուրս: Ուսումնառության եւ կեցության ծախսերը հոգում է ՔԴԵԴ-ը: Հայաստանյան ուսումնական ցիկլի ողջ գործընթացը մասնակցի կողմից համաֆինանսավորվում է 39 800 ՀՀ դրամի չափով:

Միջոցառումների հայաստանյան ցիկլը բարեհաջող ավարտողները կարող են դիմել ստրասբուրգյան սեմինարին մասնակցելու համար: Դիմումները քննության կառնվեն ըստ Եվրոպայի խորհրդի սահմանած պայմանների եւ քվոտաների:

Հայաստանյան դասընթացը բարեհաջող ավարտածներին Եվրոպայի խորհրդի կողմից կտրվի ավարտական վկայական:

Որեւէ փուլում իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն ներկայացրածները կզրկվեն ՔԴԵԴ-ի աշխատանքներին մասնակցելու հնարավորությունից դրանք ի հայտ գալուն պես:

Փաստաթղթային փաթեթը ներկայացնել անձամբ՝ անձնագրի կամ նույնականացման քարտի առկայությամբ:

Թերի ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման: ՔԴԵԴ հանձնված փաստաթղթերը չեն պատճենահանվում եւ չեն վերադարձվում: Էլեկտրոնային տարբերակով ուղարկված փաստաթղթերը չեն կցվում գործերին: Ներկայացնել միայն բնօրինակները:

Դիմումներն ընդունվում են փետրվարի 27-ին եւ 28-ին՝ ժամը 12:30-ից 16:30-ը: Այդ օրերին հանրապետությունից բացակայողները կարող են փաստաթղթային փաթեթը հանձնել ավելի վաղ՝ նախապես պայմանավորվելով: Հասցե՝ Խորենացու պող. 33, «Տաշիր» կենտրոնի 6-րդ՝ գրասենյակային հարկ, 31-րդ սենյակ:

Հեռախոս՝ 010 51 11 71 :

Կայք՝ www.ysps.am :

ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍՈՒՑՉԻ 27 ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔ

Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի հարցման՝ Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում ընդհանուր առմամբ աշխատում են 1830 ուսուցիչ եւ ուսուցչի օգնական: Նրանցից 1722-ն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, 173-ը՝ բարձրագույն ոչ մանկավարժական կրթություն, 113-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի 27 թափուր հաստիք՝ Մաթեմատիկա, Քիմիա, Կենսաբանություն, Ֆիզիկա, Անգլերեն, Ռուսերեն, Պատմություն, Արվեստ, Բնագիտություն, Ինֆորմատիկա, Շախմատ, Տեխնոլոգիա, Երաժշտություն առարկաների գծով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԸ

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը 13 տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ մի շարք ապրանքատեսակների իրացման բարձր գներ կիրառելու համար:

Հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովից հայտնում են, որ վարչական վարույթները հարուցվել են Ստեփանակերտ քաղաքում գործող 4, Ասկերան քաղաքում գործող 5, Մարտակերտ քաղաքում գործող 2 եւ Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ եւ Հարությունագոմեր համայնքներում գործող 1-ական առեւտրային օբյեկտներ շահագործող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ:

Արձանագրված բոլոր դեպքերում առեւտրային օբյեկտներում բացակայել են ապրանքատեսակների ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերը: Գնագոյացումը վերահսկելու եւ բարեխիղճ մրցակցային միջավայր ապահովելու նպատակով հանձնաժողովը եւս մեկ անգամ հորդորում է տնտեսվարող սուբյեկտներին զերծ մնալ առանց հիմնավորող փաստաթղթերի եւ բարձր գներով ապրանքների իրացումից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍԻՐԱՀԱՐՆԵՐԻ ՏՈՆ

ՀԱՅ ՀԱՅՏՆԻՆԵՐՆ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՆՇԵԼ ՎԱԼԵՆՏԻՆԻ ՕՐԸ

Փետրվարի 14-ին ամբողջ աշխարհում նշվում է Սուրբ Վալենտինի կամ բոլոր սիրահարների օրը:

Այս տոնը նշում են աշխարհի կաթոլիկները: Այն առաջին անգամ հիմնել է Հելասիուս I Հռոմի պապը 496թ.-ին, եւ ավելի ուշ հանվեց Կաթոլիկ տոների օրացույցից 1969թ.-ին: Ներկայումս այն տոնում են աշխարհի մոտ 100 երկրում, հիմնականում՝ Արեւմուտքի երկրներում: Այն համարվում է աշխատանքային օր բոլոր երկրների համար: Վալենտինի օրն ի սկզբանե նշվել է որպես պատարագային տոն՝նվիրված վաղ քրիստոնեական շրջանի սրբերից մեկի՝ Սբ. Վալենտինիուսի հիշատակին: Վերջինիս, ըստ ավանդության, դատապարտել էին մահվան զինվորներին գաղտնի պսակադրելու համար: Ավանդությունն այնուհետ ասում է, որ կալանավայրում նա բուժել է բանտապետի աղջկան, որին էլ հետագայում սիրահարվել է: Նշվում է նաեւ, որ մինչեւ իր դատավճռի ի կատար ածումը նա հրաժեշտի նամակ է թողնում իր սիրած էակին, որի վերջում գրված է լինում «Քո Վալենտին»: Սբ. Վալենտինի օրը աշխարհի շատ երկրներում պաշտոնապես նշվում է որպես սիրահարների տոն: Չնայած մենք՝ հայերս, ունենք սիրո խորհրդանիշ Սուրբ Սարգիսի տոնը, սակայն նշում ենք նաեւ Վալենտինը: Այսպիսով, ArmLur.am-ը հատուկ իր ընթերցողների համար ներկայացնում է այն հայ հայտնիներին, որոնք նշել են սիրո տոնը: Հաղորդավարուհի Արեւիկ Ուդումյանը, օրվան համահունչ, տեղադրել է «Ինստագրամ»-ում կարմիր շրթներկով գեղեցիկ լուսանկար եւ գրել. «Սիրում եմ, սիրահարված եմ, չեմ սիրում, սիրում եմ, բայց միասին չենք, սիրում եմ մենակ ինձ: Երկուշաբթին թեթեւացնենք»: Երգիչ Արամ շբ3-ին լուսանկար է հրապարակել կնոջ հետ եւ գրել. «Շնորհավոր բոլոր սիրահարների տոնը»: Դերասանուհի Ծովինար Մարտիրոսյանը հետաքրքիր լուսանկար է հրապարակել եւ սիրո խոստովանություն արել ամուսնուն. «Ես սիրում եմ նրան այսօր, վաղը եւ որքան սիրտս կզարկի»: Դերասանուհի Անի Լուպեն 30-ականների ոճով հետաքրքիր ֆոտոշարքով է հանդերձ եկել՝ օրվա խորհրդով պայմանավորված, եւ լուսանկարներին կից գեղեցիկ գրառմամբ հանդես եկել. «Երբ մեկի հայացքը խմում է հոգիս, ու ես սկսում եմ ապրել նոր տողից»: Դերասանուհի, այժմ նաեւ բլոգեր Աստղիկ Ալավեդյանը՝ ամուսնու՝ Նարբե Պողոսյանի հետ լուսանկար է հրապարակել եւ նշել, որ տարին 365 օր նրա համար սիրո տոն է: Երգչուհի Զարուհի Բաբայանը ամուսնու հետ ռոմանտիկ եւ գունավառ լուսանկար է հրապարակել. «ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ, Վալենտին, Միամսյակ... Կարծես այս շրջանում պետք է ավելի շատ խոսենք սիրո մասին: Շատ հնարավոր է՝ բոլորիս դրական էներգիան հասնի տիեզերք, եւ վերջապես քամիները խաղաղություն եւ հանդարտություն բերեն բոլորիս կյանք»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ո՞Վ Է ՍՈՆԱ ՇԱՀԳԵԼԴՅԱՆԻ ԱՄՈՒՍԻՆԸ

Փետրվարի 14-ին երգչուհի Սոնա Շահգելդյանը նշում է ծննդյան 37-րդ տարեդարձը:

Սոնան հայկական շոուբիզնեսի արտիստներից տարբերվում է իր չափազանց անկեղծությամբ, էմոցիաներով, երբեմն նաեւ սկանդալային լինելով, եւ, չնայած այս ամենին, Սոնան դասվում է այն արտիստների շարքին, որոնք խուսափում են հանրայնացնել իրենց անձնական կյանքը: Ավելին՝ Սոնան մինչ այսօր երբեւէ ամուսնու հետ լուսանկար չի հրապարակել, իսկ որդուն սկսել է վերջին շրջանում հանրայնացնել, հրապարակել լուսանկարներ եւ նրա մասնակցությամբ վիդեո ռոլիկներ, ինչպես անում են շատ հայտնի մայրիկներ: ArmLur.am-ը հրապարակում է մի լուսանկար, որտեղ երեւում է, թե ով է Սոնա Շահգելդյանի ամուսինը:

Նշենք, որ ավելի վաղ, իր հարցազրույցներում անդրադառնալով ամուսնուն, երգչուհին նշել էր, որ երաժշտության հետ կապ չունի, աշխատում է բիզնես ոլորտում:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

ՓԱՐԻԶՅԱՆ ՇՔԵՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀԱՑԱՎ

Լեգենդար հունահայ դիզայներ Պատրիսիա Ֆիլդը, որը ստեղծել է «Սեքսը՝մեծ քաղաքում» սերիալի Քերի Բրեդշոուի եւ «Սատանան Պրադա է կրում» ֆիլմի Միրանդա Փրեսլիի կերպարները, հրապարակել է իր «Պետը՝ քաղաքում» հուշերը:

Գրքում նա պատմում է իր կարիերայի մասին՝ սկսած իր մոր՝ քիմմաքրման ցանցում աշխատելուց մինչեւ նորաձեւության արդյունաբերության ամենաբեղմնավոր խաղացողներից մեկը դառնալը:

Հույն եւ հայ ծնողների ընտանիքում՝ Քուինսում ծնված Ֆիլդն իր առաջին Pants Pub բուտիկը բացել է 24 տարեկանում՝ Նյու Յորքի համալսարանում փիլիսոփայություն եւ կառավարում սովորելուց հետո: «Ես ուզում էի ժամանակակից վայր, որը կսպասարկի երիտասարդ եւ նորաձեւ կանանց», - գրում է նա գրքում:

Ֆիլդը պատմում է Փարիզ կատարած իր ուղեւորության մասին՝Netflix-ի «Էմիլին՝ Փարիզում» ֆիլմին ընդառաջ, որում նա խորհրդատու էր: «Ես գնացի՝ ստուգելու փարիզյան շքեղությունը: Բոլորը միայն ջինսե, սպորտային տաբատներով ու մարզաշապիկներով էին: Ես զանգահարեցի Դարեն Սթարին (շոուի ստեղծողին) եւ ասացի. «Փարիզյան շքեղությունը մահացել է.. Չգիտեմ: Ես պարզապես նախընտրում եմ ինքնությունը»:

Ոչ ոք ավելի լավ կարից գլուխ չի հանում, որքան Ֆիլդը: 82-ամյա կինը հայտնի է նրանով, որ ձեւավորել է հեռուստատեսության ամենահայտնի նորաձեւության խորհրդանիշներից մեկի՝ «Սեքսը՝մեծ քաղաքում» սերիալի Քերի Բրեդշոուի զգեստապահարանը: Սառա Ջեսիկա Փարքերի մարմնավորած կերպարը դարձավ ակնթարթային ոճի կուռք, երբ 1998 թվականին HBO-ով տեղի ունեցավ սերիալի պրեմիերան:

Լինի դա Fendi ապրանքանիշի փայլերով պայուսակ, John Galliano-ի «թերթային» զգեստ Dior-ի համար, թե 5-դոլարանոց տուփ, Քերիի էկլեկտիկ եւ հաճախ բավականին խենթ հանդերձանքները պաշտամունքային կարգավիճակ են ձեռք բերել այն աստիճան, որ դարձել են յուրօրինակ կերպարներ՝կայուն հաստատված ամսագրերի եւ նորաձեւության պատմության մասին գրքերի էջերում: Չնայած սերիալն ավարտվել է մոտ 20 տարի առաջ, Ֆիլդի աշխատանքը դեռ պարբերաբար նշվում է սոցիալական ցանցերում:

Սերիալից հետո՝ երկու տասնամյակների ընթացքում, Ֆիլդը հաստատվել է որպես զգեստների դիզայներ, որը պատասխանատու է փոփ մշակույթի որոշ ամենահիշարժան կերպարների համար: Ugly Betty-ի ֆիլմում Բեթի Սուարեսը շքեղ զգեստապահարան ուներ, եւ, իհարկե, նորաձեւության աստվածաշնչի խմբագիրն ու հազարավոր մեմերի հիմքում ընկած Միրանդա Փրիսթլին, որի համար Ֆիլդն առաջադրվել է «Օսկարի»:

● *Փետրվարի 15-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Արծվաբույն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Գործատուս պահանջում է ազատվելու դիմում գրել ու չի թողնում, որ աշխատեմ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Ռոզա Վարդանյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե գործատուն առանց պատճառաբանության ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից, իսկ Դուք չեք ցանկանում, ապա աշխատանքից ազատվելու դիմում չգրելը Ձեր իրավունքն է, եւ գործատուն իրավունք չունի հարկադրելու Ձեզ ազատվել աշխատանքից: Եվ եթե ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից իր նախաձեռնությամբ, ապա օրենքը հստակ սահմանում է այդ դեպքերի սպառիչ ցանկը, որոնց դեպքում գործատուն պետք է նախապես ծանուցի աշխատողին կամ գրավոր բա-ցատրություն վերցնի աշխատողից, երբ ցանկանում է աշխատողին ազատել աշխատանքից ինչ-որ խախտումների պատճառով: Իսկ այն դեպքում, երբ գործատուն արգելում է Ձեզ ներկայանալ աշխատանքի եւ կատարել Ձեր աշխատանքային պարտականությունները, ապա Դուք իրավունք ունեք պահանջել գործատուից վճարել Ձեզ այն օրերի համար, որոնց ժամանակ Դուք չեք կարողացել աշխատել, ինչպես նաեւ պահանջել վճարել Ձեզ պատճառված վնասները:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է նկատի ունենալ, որ նման իրավիճակում պետք է ինքներդ Ձեզ ապահովագրեք հնարավոր բացասական իրավիճակներից, երբ, օրինակ, գործատուն կփորձի Ձեր՝ աշխատանքի չներկայանալը ներկայացնել որպես պատճառ Ձեզ աշխատանքից ազատելու համար: Դա կանխելու համար անհրաժեշտ է հնարավորինս շուտ գործատուին ուղարկել դիմում, որով կխնդրենք պարզաբանել, թե ինչու նա չի թույլատրում աշխատանքի ներկայանալ, արդյոք նա ազատել է Ձեզ աշխատանքից, թե ոչ: Դիմումը անհրաժեշտ է ուղարկել փոստային ծառայությամբ՝ հետադարձ ծանուցմամբ, որպեսզի հետագայում կարողանաք հիմնավորել, որ Ձեր դիմումը գործատուն ստացել է: Այս քայլը Ձեզ հնարավորություն կտա հետագայում, երբ վեճ առաջանա Ձեր եւ գործատուի միջեւ, փաստաթղթային տարբերակով հիմնավորել եւ ապացուցել, որ հենց գործատուն է խոչընդոտել Ձեր՝ աշխատանքի ներկայանալուն:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Իմ նկարով ֆեյք են բացել ու վարկաբեկում են ինձ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Լուսինե Մուժիկյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն դեպքում, երբ հայտնաբերել եք, որ Ձեր տվյալներով՝ներառյալ Ձեր լուսանկարները, բացվել են ֆեյսբուքյան կամ այլ սոցիալական կայքի էջեր, ապա՝

-յուրաքանչյուր սոցիալական կայք՝ Facebook.com, Vkontakte.ru, odnoklassniki.ru եւ այլն, ունի հատուկ կարգավորումներ, որոնք թույլ են տալիս բողոքներ ուղարկելով արգելափակել կոնկրետ սոցիալական էջի օգտատիրոջ գործողությունները: Անհրաժեշտ է դիմել տվյալ սոցիալական կայքի ադմինսիտրացիային՝ պահանջելով արգելափակել տվյալ օգտատիրոջ գործողությունները՝ որպես ֆեյք/կեղծ օգտատիրոջ:

-Անհրաժեշտ է համապատասխան դիմում-բողոք ուղարկել ՀՀ արդարադատության նախարարության «Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն»՝ խնդրելով հարուցել համապատասխան վարույթ: Դիմում-բողոքին պետք է կցել ֆեյք էջից կատարված բոլոր արտատպումները:

-Անհրաժեշտ է հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններին՝ խնդրելով նախապատրաստել նյութեր եւ պարզել, թե ով է առանց Ձեր համաձայնության օգտագործել Ձեր տվյալները:

Պետք է պահպանել ֆեյք/կեղծ էջերի էլեկտրոնային հղումները, արտատպել ֆեյք էջի բոլոր հատվածները տպիչ սարքի միջոցով, որտեղ կերեւան նաեւ Ձեր լուսանկարները կամ անձնական տվյալները, արտատպել նաեւ տվյալ ֆեյք էջի «ընկերներ» եւ այլ բաժինների հատվածները:

ՀՀ արդարադատության նախարարության
անձնական տվյալների պաշտպանության
գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մարդու անձնական տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով, պատժվում է տուգանքով՝ 200,000-ից 500,000 դրամի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է
Երեւան-Մեղրի ավտոճանապարհին

Փետրվարի 13-ին Ջոդի կամրջի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ. տուժածներ չկան: Պարզվել է, որ բախվել են Mercedes մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Ա. Ս.՝ ծնված 1979 թ.) եւ մարդատար գնացքը (մեքենավար՝ Ս. Գ.՝ ծնված 1961 թ.):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: